ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

375015, Երևան 15, Գրիգոր Լուսավորչի 13

№ 1124-Ա «21» մայիսի 2003 թ.

ԿԻԼԻԿԻԱ ԹԱՂԱՄԱՍԻ ՄԱԿԱՐԵՆԿՈ ՓՈՂՈՑԻՆ ՀԱՐՈՂ՝ ՋՐԱՄԲԱՐԻՆ ԵՎ ԳԱՐԵՋՐԻ ԳՈՐԾԱՐԱՆԻՆ ԿԻՑ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՁԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՃՇՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արթուր Բարսեղյանը Երևանի քաղաքապետարան է ներկայացրել Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 17.02.2003թ. (գործ հ.2-992/2003) վճիռը, որով՝ճանաչվել է իր օգտագործման իրավունքը Կիլիկիա թաղամասի Մակարենկո փողոցին հարող տարածքում, ջրամբարին և գարեջրի գործարանին կից 2195,0քմ մակերեսով հողամասի նկատմամբ, իսկ դրանում առկա 60,0քմ մակերեսով շինության նկատմամբ՝ սեփականության իրավունքը:՝

Տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ վերոհիշյալ հասցեում գտնվող շինության և սպասարկման համար օգտագործվող հողամասի ընդհանուր մակերեսը կազմում է 2195,0քմ:

Ղեկավարվելով << հողային օրենսգրքի 51 հոդվածի 4-րդ կետով, հիմք ընդունելով Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 17.02.2003թ. վճիռը, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 09.04.2003թ. հ.18-09/1758 եզրակացությունը, ինչպես նաև անշարժ գույքի կառավարման վարչության 23.04.2003թ. հ.20/1-Բ-27 զեկուցագիրը.

1.Կիլիկիա թաղամասի Մակարենկո փողոցին հարող՝ ջրամբարին և գարեջրի գործարանին կից տարածքում գտնվող շինության զբաղեցրած 2195,0քմ մակերեսով հողամասը վարձակալության իրավունքով, 50 տարի ժամկետով օգտագործման տրամադրել Արթուր Բարսեղյանին:

2.Սահմանել, որ հողատարածքի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից տրված գլխավոր հատակագծով:

3.Լիազորել Կենտրոն թաղային համայնքի ղեկավարին (Գ.Բեգլարյան)՝ Երևանի քաղաքապետի անունից հողօգտագործողի հետ կնքել հողի վարձակալության պայմանագիր:

4.Ընդունել ի գիտություն, որ սույն որոշման ընդունման պահից 60-օրյա ժամկետում հողօգտագործման պայմանագիր չկնքելու դեպքում որոշումը կհամարվի ուժը կորցրած:

5.Նախազգուշացնել հողօգտագործողին, որ հողի վարձակալության պայմանագիրը, << քաղաքացիական օրենսգրքի և «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» << օրենքի 23 հոդվածի համաձայն, ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքները՝ 30-օրյա ժամկետում պետական գրանցման << անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի լիազորված մարմնում:

6.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության (Ա.Գևորգյան) վրա:

7. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետի տեղակալ Վ.Վարդապետյանի վրա:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Ռ.ԱԶԱՐՅԱՆ

ՄԾ

222

ՆԱԽԱԳԻԾ-Ա

ԿԻԼԻԿԻԱ ԹԱՂԱՄԱՍԻ ՄԱԿԱՐԵՆԿՈ ՓՈՂ. ՀԱՐՈՂ ՏԱՐԱԾՔՈՒՄ, ՋՐԱՄԲԱՐԻՆ ԵՎ ԳԱՐԵՋՐԻ ԳՈՐԾԱՐԱՆԻՆ ԿԻՑ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՁԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՃՇՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արթուր Բարսեղյանը Երևանի քաղաքապետարան է ներկայացրել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 17.02.2003թ. (գործ հ.2-992/2003) վճիռը, որով ճանաչվել է օգտագործման իր իրավունքը Կիլիկիա թաղ. Մակարենկո փող. հարող տարածքում, ջրամբարին և գարեջրի գործարանին կից 2195.0ք.մ մակերեսով հողամասի նկատմամբ, իսկ դրանում առկա 60.0ք.մ մակերեսով շինության նկատմամբ՝ սեփականության իրավունքը:

Տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ վերոհիշյալ հասցեում գտնվող շինության և սպասարկման համար օգտագործվող հողամասի ընդհանուր մակերեսը կազմում է 2195.0ք.մ:

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 51 հոդվածի 4-րդ կետով, հիմք ընդունելով Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 17.02.2003թ. (գործ հ.2-992/2003) վճիռը, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 09.04.2003թ. հ.18-09/1758 եզրակացությունը, անշարժ գույքի կառավարման վարչության «23» 04 2003թ. 20/1-ք-27 զեկուցագիրը.

1. Կիլիկիա թաղ. Մակարենկո փող. հարող տարածքում, ջրամբարին և գարեջրի գործարանին կից տարածքում գտնվող շինության զբաղեցրած 2195.0ք.մ մակերեսով հողամասը վարձակալության իրավունքով, 50 տարի ժամկետով օգտագործման տրամադրել Արթուր Բարսեղյանին:
2. Սահմանել, որ հողատարածքի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից տրված գլխավոր հատակագծով:
3. Լիազորել Երևանի Կենտրոնի թաղային համայնքին (Գ.Բեգլարյան)՝ Երևանի քաղաքապետի անունից հողօգտագործողի հետ կնքել հողի վարձակալության պայմանագիր:
4. Ընդունել ի գիտություն, որ հողօգտագործման պայմանագիրը որոշման ընդունման պահից 60-օրյա ժամկետում չկնքելու դեպքում սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:
5. Նախազգուշացնել հողօգտագործողին, որ հողի վարձակալության պայմանագիրը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի և «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 23 հոդվածի համաձայն ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքները 30-օրյա ժամկետում՝ պետական գրանցման ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի լիազորված մարմնում:
6. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի Կենտրոնի թաղային համայնքին (Գ.Բեգլարյան) և Երևանի քաղաքապետարանի աշխատալազմի անշարժ գույքի կառավարման վարչության (Ա.Գևորգյան) վրա:
7. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետի տեղակալ Վ.Վարդապետյանի վրա:

Վ.ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ

Ն.ՍԱՐԳՍՅԱՆ 2.05.03

Ս.ԿՈՇԵՑՅԱՆ 29.04.03.

Հ.ՍԱՐԳՍՅԱՆ 25.04.03

Ա.ՍԱՐԳՍՅԱՆ 28.04.03թ

Ա.ԳԵՎՈՐԳՅԱՆ 23.04.03թ.

Նախագծի հեղինակ՝ Երևանի քաղաքապետարանի
աշխատակազմի անշարժ գույքի
կառավարման վարչություն

20/571
28.04.03թ.

[illegible]
ձեռնարկություն, կազմակերպություն

№ 419 մուտքի
դրամարկղային օրդերի

ԱՆԴՈՐՐԱԳԻՐ

Ընդունված է [illegible]

[illegible] -ից

Հիմք. [illegible]

[illegible]
բառերով

50.000 դրամ ____ լումա

« 16 » [illegible] 2003 թ.

Կ.Տ.

Գլխավոր (ավագ) հաշվապահ

...ահ

224

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

375015, ք.Երևան 15, Փ.Բյուզանդի 1/3 հեռ. 565 474

№ 18-09/1758 «9» 04 2003 թ.

Ձեր՝ 14.03.03թ. հ.20/1-Բ-27

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի
անշարժ գույքի կառավարման
վարչության պետ
պարոն Ա.Գևորգյանին

9.04.03թ.

Հարգելի պարոն Գևորգյան

Արթուր Բարսեղյանին պատկանող՝ Մակարենկոյի փողոցին հարող տարածքում, ջրամբարին և գարեջրի գործարանին կից տարածքում գտնվող շինության զբաղեցրած հողատարածքի սահմանների ճշտման և հողօգտագործման իրավունքի ձևակերպման վերաբերյալ հայտնում ենք, որ հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների 1-ին ատյանի դատարանի 17.02.2003թ. գործ հ.2-992/2003թ. վճիռը:

Տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ վերոհիշյալ հասցեում գտնվող շինության և սպասարկման համար օգտագործվող հողամասի ընդհանուր մակերեսը կազմում է 2195.0քմ:

Մակարենկոյի փողոցին հարող տարածքում, ջրամբարին և գարեջրի գործարանին կից Արթուր Բարսեղյանի կողմից զբաղեցրած վերը նշված մակերեսով հողամասի հողօգտագործման իրավունքի ձևակերպման վերաբերյալ վարչությունը առաջարկում է հիմք ընդունել դատական վճիռը, համաձայն կից ներկայացվող Մ 1:2000 և Մ 1:500 սխեմաների:

Կից վերադարձնում ենք փաստաթղթերի փաթեթը 8 թերթ:

Վարչության պետի ժ/պ Հ.Սարգսյան

Ա.Մարտիրոսյան

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ
Անշարժ գույքի կառավարման
վարչություն
№27 «9» 04 2003 թ.

ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ

Պարոն Հ. Գևորգյանին

Խնդրում եմ

1. Ընդունել ի՝ գիտություն, տնօրինություն, ղեկավարում, կատարում:
2. Քննարկել եւ ներկայացնել առաջարկություն:
3. Քննարկել եւ պատասխանել դիմողին:
4. Համապատասխան ընթացք տալ:
5. Զեկուցել:
6. Ամփոփել եւ տալ եզրակացություն:
7. Խոսել ինձ հետ:
8. Ներկայացնել քաղաքապետի որոշման կարգադրության նախագիծ:
9. Քննարկել, քաղաքապետարան ներկայացնել վերադասին ուղարկվող պատասխանի նախագիծ եւ տեղյակ պահել դիմողին:
10. Դիմողին հրավիրել զրույցի:
11. Պարզել եւ զեկուցել
12. Ձեռնարկել համապատասխան միջոցներ:
13.

12.03.03թ.

Ժամկետ՝

Վ. ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ

«10» 03 2003 թ.

ԵՐԵՎԱՆԻ Ք... ...ՏԱՐԱՆ
Աշխատակազմի ... կառավարման
№ Ք-24 11 03 03 « » 20 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ
Գործերի կառավարման
...
№ Ք-45, 100303

275

Երևանի քաղաքապետ
պ-ն Ռ. Նազարյանին
ք. Աշտարակի խճ. 55 շ. բնակիչ
Արթուր Բարսեղյանից

հ. 52-50-21

Դ Ի Մ Ո Ւ Մ

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առանձին տարածքի դարպասի ձեր համայնքն էլ է հաստատվել օգտագործման իրավունքով հողամաս ճանապարհի հատուկ պարտադրած:

Խնդրում եմ կանգնել հողի ձևակերպման պայմանագիր և համայնքին վճարել օրենքի հողը օգտագործել ինձ:

Դիմող [signature] Ա. Բարսեղյան

07.03.2003թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ
Գործերի կառավարչություն
19440
Բ-4Ծ 10.03.03թ.

Գործ 2-992/ 2003թ.

ՎՃԻՌ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների 1-ին ատյանի դատարանը հետևյալ կազմով .

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ՝ *Ժ.ՎԱՐԴԱՆՅԱՆ*

ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՄԲ՝ *Ռ.ԳՐԻԳՈՐՅԱՆԻ*

ՀԱՅՑՎՈՐ՝ *Ա. ԲԱՐՄԵՂՅԱՆ*

ՊԱՏԱՍԽԱՆՈՂ՝ *ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ*

ՊԱՏԱՍԽԱՆՈՂԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ՝ *Ա. ՄԱՐԳՍՅԱՆ*

Դռնբաց դատական նիստում , 2003թ-ի փետրվարի 17-ին , քննեց քաղ. գործն ըստ հայցի Արթուր Բարսեղյանի ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ ինքնակամ կառույցի նկատմամբ սեփականության և զբաղեցված հողամասի օգտագործման իրավունքների ճանաչման պահանջի մասին :

Գործի դատաքննությամբ պարզվեց հետևյալը .

Երևանի նախկին Շահումյանի շրջանային խորհրդի գործադիր կոմիտեի , իսկ այնուհետև Կենտրոն թաղապետարանի հետ կնքված վարձակալության պայմանագրերով , 1991թ.-ից հայցվորը վարձակալել և փաստացի օգտագործում է Երևանի Կիլիկիա թաղամասի Մակարենկո փողոցին հարող , ջրամբարին և գարեջրի գործարանին կից գտնվող 2651քմ. մակերեսով հողամասն ու նույն թվականին դրանում ինքնակամ իրականացրել է 60քմ մակերեսով ինքնակամ շինություն : Պարտաճանաչ կերպով վճարել է հողի վարձավճարները և տաս տարուց ավելի անընդմեջ , բարեխղճորեն ու բացահայտ օգտվում է ինչպես այդ հողամասից , այնպես էլ փաստացի , որպես սեփականություն տիրապետում է դրանում իրականացված շինությանը :

Դիմելով դատարանին , խնդրել է ճանաչել իր օգտագործման իրավունքը հիշյալ հողամասի 2195քմ.-ի նկատմամբ և սեփականության իրավունքը դրանում իրականացված 60քմ մակերեսով շինության նկատմամբ:

Հայցվոր Արթուր Բարսեղյանը պահանջը պնդեց և խնդրեց հիմք ընդունելով հայցադիմումում նշված բացատրություններն ու ներկայացված գրավոր ապացույցները , ճանաչել իր օգտագործման իրավունքը Երևանի Կիլիկիա թաղամասի Մակարենկո փողոցին հարող տարածքում , ջրամբարին և գարեջրի գործարանին կից գտնվող 2195քմ. մակերեսով հողամասի նկատմամբ , իսկ դրանում առկա 60քմ մակերեսով շինության նկատմամբ ճանաչել իր սեփականության իրավունքը :

Պատասխանողի ներկայացուցիչ Արտյոմ Սարգսյանը հայցի դեմ չառարկեց և հայտնեց , որ վիճարկվող 2195քմ հողամասի նկատմամբ հայցվորի օգտագործման նախապատվության իրավունքի ճանաչման համար որևէ իրավական և քաղաքաշինական խոչընդոտ չկա :

- Դատարանին ներկայացված 11.02.03թ. թիվ 18-06/639 գրությամբ՝ Երևանի քաղաքապետարանի Ճարտարապետության և քաղաքաշինության վարչությունը հայտնել է , որ Երևանի Կիլիկիա թաղամասի Մակարենկո փողոցին հարող տարածքում ջրամբարին և գարեջրի գործարանին կից Արթուր Բարսեղյանի կողմից փաստացի օգտագործվող ընդհանուր 2651քմ. մակերեսով հողամասից 2195.0քմ-ը համապատասխանում է ՀՀ հողային օր.-ի 64 հոդվածի 2-րդ կետի 1-ին , 2-րդ և 3-րդ ենթակետերով սահմանված պահանջներին , իսկ 420.0քմ հողամասը հանդիսանում է քննարկվող տարածքով անցնող ջրագծերի զբաղեցրած և նրանց սպասարկման տարածք , ուստի չի համապատասխանում ՀՀ հողային օր.-ի 64 հոդվածի 2-րդ կետով սահմանված պահանջներին :

Գնահատելով դատաքննությամբ հետազոտված ապացույցները , կողմերի բացատրությունները , գործում եղած փաստաթղթային տվյալները , դատարանը գտավ , որ հայցապահանջը հիմնավոր է և ենթակա բավարարման հետևյալ պատճառաբանությամբ .

Դատաքննությամբ հետազոտված ապացույցներով դատարանը հաստատված համարեց , որ հայցվորը դեռև 1991թ.-ից անընդմեջ , բարեխղճորեն ու բացահայտ օգտվում է ինչպես վիճարկվող հողամասից , այնպես էլ փաստացի , որպես սեփականություն տիրապետում է դրանում իրականացված ինքնակամ շինությանը , իսկ համաձայն ՀՀ հողային օրենսգրքի 72 հոդվածի 1-ին կետի՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք պետության ու համայնքների հողերի այն հողամասերի նկատմամբ , որոնց տիրապետում են առանց իրավաբանական ձևակերպման և որոնցից օգտվում են անընդմեջ ու բացահայտ ավելի քան տասը տարի , ունեն օգտագործման իրավունքի ձեռքբերման վաղեմության իրավունք , եթե հողամասերը համապատասխանում են նույն օրենսգրքի 64 հոդվածի 2-րդ կետով սահմանված պահանջներին :

Միաժամանակ , նույն օրենսգրքի 116 հոդվածի 4-րդ կետի համաձայն , հայցվորն իրավասու է իրեն չպատկանող հողամասում ինքնակամ կառուցած շինության նկատմամբ ձեռք բերել սեփականության իրավունք դատարանի վճռով , եթե հողամասը սահմանված կարգով տրամադրվի նրան , որի առումով նույնպես դատարանը հայցապահանջը մերժելու որևէ հիմք չունի :

Ղեկավարվելով ՀՀ քաղ. դատ. օր-ի 130-132 հոդվածներով , դատարանը .

ՎՃՌԵՑ՝

Հայցապահանջը բավարարել :

Ճանաչել Արթուր Բարսեղյանի օգտագործման իրավունքը Երևանի Կիլիկիա թաղամասի Մակարենկո փողոցին հարող տարածքում, ջրամբարին և գարեջրի գործարանին կից 2195,0քմ. մակերեսով հողամասի նկատմամբ , իսկ դրանում առկա 60քմ մակերեսով շինության նկատմամբ

ճանաչել նրա սեփականության իրավունքը , կատարել համապատասխան գրանցում :

Վճիռը կամովին չկատարելու դեպքում , այն կկատարվի ԴԱՀԿ ծառայության միջոցով :

Վճիռը կարող է բողոքարկվել ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանին 15 օրվա ընթացքում :

ԴԱՏԱՎՈՐ Ժ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Վճիռը ուժի մեջ է օրինական է:

Դատավոր Ժ. Վարդանյան

280




ԱՐԹՈՒՐ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ
ՇԻՆՈՒԹՅԱՆ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍ
Տ= 2195.0 ք.մ.
S=2619.11
2520.0
22.0
18.5
31.0
62.5
46.4
31.0
16.2
12.2
6.0
85.92

пустырь
спорт. пл.
стадион
отвал
спорт. площадка
шк.
огород
пашня
стадион „Раздан"
ул. Совхозная
ул. Чайкиной
ул. Цеховая
ул. Праги
ул. Носеаканян
ул. Макаренко
ул. Кореаканян
парк
маг.
конт.
Андановский
вохр.
пашня


р. Раздан
Эчмиадзинское шоссе
Арташатский канал
развалина
ул. Парпечи
ул. Исакова
бас.
кот.
стр.
парк
декор

Ա Դ.
20/1-Բ-27 14.03 283

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ Ժ/Պ ՊԱՐՈՆ Հ.ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Արթուր Բարսեղյանը Երևանի քաղաքապետարան է ներկայացրել Կենտրոն և Մորք-Մարաշ համայնքների 1-ին ատյանի դատարանի 17.02.2003թ. /գործ 2-992/2003թ./ վճիռը՝ որով ճանաչվել է օգտագործման իր իրավունքը Կիլիկիա թաղ. Մակարենկոյի թող. հարող տարածքում, ջրամբարին և գարեջրի գործարանին կից 21950.0ք.մ մակերեսով հողամասի նկատմամբ, իսկ դրանում առկա 60.0ք.մ մակերեսով շինության նկատմամբ՝ սեփականության իրավունքը:

Ա.Բարսեղյանը խնդրել է ճշտել նշված հողամասի սահմանները, կնքել հողի վարձակալության պայմանգիր և օտարել իրեն:

Հարցին, սահմանված կարգով, ընթացք տալու նպատակով, խնդրում եմ Ձեր եզրակացությունը:

Առդիր 5 թերթ, ետ վերադարձնելու պայմանով:

ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝ Ա.ԳԵՎՈՐԳՅԱՆ

Լ.Գարոյան

C:\MYDOCU~2\2003\LEVON\HARCUM\03.03\14.DOC

Ծ.Բ.

Սիրանուշ Համբարձումյանը [illegible] Երևանի [illegible] է [illegible] Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների 1-ին ատյանի դատարանի 17.02.2003թ. (գործ 2-992/2003թ) վճիռը, որով ճանաչվել է [illegible] իրավունքը [illegible] փող-ում [illegible] փող. [illegible], [illegible] և [illegible] 2195,0 ք.մ. մա-կերեսով [illegible], [illegible] առանձին 60 ք.մ. մակերեսով [illegible] ամբող-ջովին սեփականության իրավունքը:

Ս.Հ. Համբարձումյանը [illegible] [illegible] [illegible] [illegible], [illegible] [illegible] [illegible] և [illegible] [illegible]:

[illegible], [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]

Սիրանուշ 5 [illegible] [illegible] [illegible]:

284

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

375015, Երեւան 15, Գ.Լուսավորչի 13 Հեռ. 58 07 20

№ 07/528 «13» 05 2003թ.

Ձեր

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՊԱՐՈՆ Ռ.ՆԱՁԱՐՅԱՆԻՆ

ԶԵԿՈՒՅԱԳԻՐ

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 17.02.03թ. թիվ 2-992 վճռով ճանաչվել է Արթուր Բարսեղյանի օգտագործման իրավունքը Երևանի Կիլիկիա թաղամասի Մակարենկո փողոցին հարող տարածքում, ջրամբարին և գարեջրի գործարանին կից 2195,0քմ մակերեսով հողամասի նկատմամբ և սեփականության իրավունքը՝ 60քմ մակերեսով շինության նկատմամբ

Դատավարությանը քաղաքապետարանի շահերը ներկայացրել է իրավաբանական վարչության պետի տեղակալ Կ.Սարդարյանը:

Վճիռ կայացնելիս դատարանը հիմք է ընդունել անշարժ գույքի տիրապետման վաղեմության փաստը, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճՔ վարչության 11.02.03թ. թիվ 18-06/639 գրությունը, համաձայն որի վիճարկվող 2195,0քմ մակերեսով հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերով սահմանված պահանջներին :

Այսպիսով վճիռը բխում է գործող օրենսդրության պահանջներից, ստացել է օրինական ուժ և համաձայն ՀՀ քաղ. դատ. օր-ի 14 հոդվածի ենթակա է պարտադիր կատարման:

/ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝ Ա.ՍԱՐԳՍՅԱՆ

Կատ.Կ.Սարդարյան

285

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

375015, Երեւան 15, Մ. Խորենացի 26ա Հեռ. 52 43 12

№ 20/1-ք-25 «18» 04 2003թ.

Ձեր _____

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ
ՊԱՐՈՆ Վ.ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆԻՆ

Զ Ե Կ Ո Ւ Յ Ց Ա Գ Ի Ր

Արթուր Բարսեղյանը Երևանի քաղաքապետարան է ներկայացրել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 17.02.2003թ. (գործ հ.2-992/2003) վճիռը, որով ճանաչվել է օգտագործման իր իրավունքը Կիլիկիա թաղ. Մակարենկո փող. հարող տարածքում, ջրամբարին և գարեջրի գործարանին կից 2195.0ք.մ մակերեսով հողամասի նկատմամբ, իսկ դրանում առկա 60.0ք.մ մակերեսով շինության նկատմամբ՝ սեփականության իրավունքը:

Տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ վերոհիշյալ հասցեում գտնվող շինության և սպասարկման համար օգտագործվող հողամասի ընդհանուր մակերեսը կազմում է 2195.0ք.մ:

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 51 հոդվածի 4-րդ կետով, հիմք ընդունելով Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 17.02.2003թ. (գործ հ.2-992/2003) վճիռը, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 09.04.2003թ. հ.18-09/1758 եզրակացությունը, անշարժ գույքի կառավարման վարչությունը գտնում է նպատակահարմար Կիլիկիա թաղ. Մակարենկո փող. հարող տարածքում, ջրամբարին և գարեջրի գործարանին կից տարածքում գտնվող շինության զբաղեցրած 2195.0ք.մ մակերեսով հողամասը վարձակալության իրավունքով, 50 տարի ժամկետով օգտագործման տրամադրել Արթուր Բարսեղյանին:

Կից Ձեր նշագրմանն է ներկայացվում Երևանի քաղաքապետի որոշման նախագիծը:

Ա.ԳԵՎՈՐԳՅԱՆ

Ա Ռ Ա Ք Մ Ա Ն Թ Ե Ր Թ Ի Կ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Երևանի քաղաքապետ
Քաղաքապետի տեղակալ
Քաղաքապետի տեղակալ
Քաղաքապետի տեղակալ
Քաղաքապետի տեղակալ
Քաղաքապետարանի աշխատակազմի ղեկավար
Քաղաքապետի գլխավոր խորհրդական
Քաղաքապետի խորհրդական

ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

1. Անշարժ գույքի կառավարման վարչ.
2. Առողջապահության վարչ.
3. Առևտրի և սպասարկումների վարչ.
4. Արտաքին կապերի վարչ.
5. Բարեկարգման, շինար. և գյուղատնտ. վարչ.
6. Բնապահպանության վարչ.
7. Իրավաբանական վարչ.
8. Կոմունալ տնտեսության վարչ.
9. Կրթության վարչ.
10. Ճարտ.շին. վերահսկողության վարչ.
11. Ճարտարապետության և քաղաքաշինության վարչ.
12. Մշակույթի, երիտասարդ. հարցերի և սպորտի վարչ.
13. Սոցիալական ապահովության վարչ.
14. Տեղեկատվության վարչ.
15. Տրանսպորտի վարչ.
16. Քարտուղարություն
17. Ֆին. և սոցիալ-տնտեսական զարգացման վարչ.
18. Առաջին բաժին
19. Կազմակերպատեսչական բաժին
20. Հաշվապահական հաշվետվության բաժին

ԹԱՂԱՊԵՏԱՐԱՆՆԵՐ

1. Շենգավիթ
2. Կենտրոն
3. Էրեբունի
4. Արաբկիր
5. Մալաթիա-Սեբաստիա
6. Նոր Նորք
7. Աջափնյակ
8. Դավիթաշեն
9. Ավան
10. Քանաքեռ-Զեյթուն
11. Նորք-Մարաշ
12. Նուբարաշեն

ԱՅԼ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նախագծի հեղինակ՝ _____ / _____ /
ստորագրություն ազգանուն